ՔԱՂՎԱԾՔ

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 14.09.2018թ. ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ

Նիստը վարում էր համայնքի ղեկավար, ավագանու անդամ Մամիկոն Ասլանյանը:

Մասնակցում էին՝

Հայաստանի Հանրապետական կուսակցության ավագանու խմբակցության անդամներ՝

Արտյոմ Գրիգորյանը, Արմեն Մատինյանը, Մարինե Հովհաննիսյանը, Հայկազ Մովսիսյանը, Դավիթ Սիմոնյանը, Սոխակ Մելքոնյանը, Գայանե Քալանթարյանը, Խորեն Վարդանյանը,Սեյրան Ղամբարյանը , Արման Ափինյանը:

Հայ Հեղափոխական Դաշնակցություն կուսակցության ավագանու խմբակցության անդամ՝

Արևիկ Լոքյանը:

«Հայկական Վերածնունդ» կուսակցության ավագանու խմբակցության անդամներ՝

Արկադի Փելեշյանը, Կարեն Դավթյանը, Էրիկ Մովսիսյանը, Տիգրան Նազարյանը:

«Բարգավաճ Հայաստան» կուսակցության ավագանու անդամներ՝ *Հրաչիկ Ղամբարյանը, Մարիամ Ապերյանը, Դավիթ Հակոբյանը:*

Նիստից բացակայում էին՝

Հայաստանի Հանրապետական կուսակցության ավագանու խմբակցության անդամներ՝

Վահագն Ավագյանը, Վահե Դոխոյանը:

Հայ Հեղափոխական Դաշնակցություն կուսակցության ավագանու խմբակցության անդամ՝

Սեյրան Աղաբեկյանը:

«Հայկական Վերածնունդ» կուսակցության ավագանու անդամ՝

Համիկ Խլուպուզյանը:

«Լուսավոր Հայաստան» կուսակցության ավագանու խմբակցության անդամներ՝

Քրիստ Մարուքյանը, Կարինե Ղուկասյանը, Հրանտ Այվազյանը, Հայկազ Սիմիկյանը, Վահե Կոռյանը, Անահիտ Կարապետյանը, Ռոմիկ Մարգարյանը, Կարեն Բեկչյանը, Սուրեն Կարապետյանը, Արմեն Եղիազարյանը:

Նիստին մասնակցում էին նաև համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար *Արթուր Օհանյանը*, համայնքապետարանի ստորաբաժանումների ղեկավարներ, հասարակական կազմակերպությունների և ՁԼՄ-ների ներկայացուցիչներ:

Նիստը վարող *Մամիկոն Ասլանյանը* ժամը 11.10-ին նիստը հայտարարեց բացված:

(Վանաձորի ավագանու 2018 թվականի 5-րդ նստաշրջանի 14.09.2018 թ. ավագանու հերթական նիստի տեսաձայնագրությունն ամբողջովին առկա է https://www.youtube .com/watch?v =w3isjr LellE (հղումով):

Նիստը վարողն առաջարկեց քվեարկությամբ հաստատել օրակարգն ամբողջությամբ:

Կողմ՝ 19, քվեարկությամբ հաստատվեց օրակարգը, ինչը նաև օրակարգի առաջին հարցի սպառումն էր :

Հաստատվեց օրակարգը՝

1.Վանաձոր համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ 109-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին /11.791.000/

զեկ.՝ Վ.Գրիգորյան

2. Վանաձոր համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ 109-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին /5.622.222/

զեկ.՝ Վ.Գրիգորյան

3. Վանաձոր համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ 109-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին /3.800.000/

զեկ.՝ Վ.Գրիգորյան

4. Վանաձոր համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ 109-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին 3.500.000/

զեկ.՝ Վ.Գրիգորյան

5. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնքի սեփականություն համարվող արխիվային փաստաթղթերի սեփականության իրավունքը պետական սեփականության փոխանցելու մասին

զեկ.՝ Ա.Օհանյան

6. Վանաձոր համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերը մրցույթով կառուցապատման իրավունքով տրամադրելու և հողամասերի վարձավճարների մեկնարկային գներ սահմանելու մասին

զեկ.՝ Ս.Աբովյան

7.Վանաձոր համայնքի վարչական տարածքում գտնվող համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերի աճուրդային վաճառքի նվազագույն մեկնարկային գներին համաձայնություն տալու մասին

զեկ.՝Ս.Աբովյան

8. «Վանաձոր համայնքի թիվ 32 մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը շինություն և հողամաս անհատույց օգտագործման իրավունքով տրամադրելու մասին

զեկ.՝Ս.Աբովյան

9. «Վանաձոր համայնքի թիվ 33 մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը շինություն և հողամաս անհատույց օգտագործման իրավունքով տրամադրելու մասին

զեկ.՝Ս.Աբովյան

10. Վանաձոր համայնքի Լուսավորչի փողոցի թիվ 49-41/1 հասցեում գտնվող տաղավարը և դրանով զբաղեցված հողամասը ուղղակի վաճառքի ձևով Համլետ Վահանի Մալումյանին օտարելու մասին

զեկ.՝Ս.Աբովյան

11. Զորավար Անդրանիկի հիշատակը հավերժացնող հուշարձանի տեղադրմանը համաձայնություն տալու մասին

զեկ.՝Ս.Աբովյան

12. Սուրեն Սարգսի Բասենցյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրմանը համաձայնություն տալու մասին

զեկ.՝Ս.Աբովյան

13. Վանաձոր համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 11-ի «Վանաձոր համայնքի համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների հաստիքացուցակները, պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» թիվ 105-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին /Թիվ 5 մանկապարտեզ/

զեկ.՝ Գ.Բաղյան

14. Վանաձոր համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 11-ի «Վանաձոր համայնքի համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների հաստիքացուցակները, պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» թիվ 105-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին /Գուսան Զաքարյանի անվան մշակույթի տուն/

զեկ.՝ Գ.Բաղյան

15. «Վանաձորի համայնքի թիվ 1 մշակույթի տուն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը անվանափոխելու մասին

զեկ.՝ Գ.Բաղյան

16. Գրադարանային գույք և գրքային ֆոնդ նվիրաբերելու մասին

զեկ.՝ Վ.Դավիթավյան

17. «Լոռու մարզի ձյուդոյի ֆեդերացիա» հասարակական կազմակերպությանը անհատույց օգտագործման իրավունքով տարածք տրամադրելու մասին

զեկ.՝ Վ.Դավիթավյան

18. Տիգրան Վասակի Կիրակոսյանին վարձակալությամբ բնակարան հանձնելու մասին

զեկ.՝ Կ.Պառավյան

19. Վանաձոր համայնքի ավագանու հերթական նիստի օրը որոշելու մասին

զեկ.՝ Մ.Ասլանյան

1. **ԼՍԵՑԻՆ** - Վանաձոր համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ 109-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

- Զեկուցեց համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսական բաժնի պետ Վահե Գրիգորյանը:

Զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրին լրացուցիչ պարզաբանումներ: Հարցը վերաբերում էր Շ.Ազնավուրի անվան մշակույթի պալատի տանիքի վերանորոգմանը՝ 11 791 հազար դրամ:
Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 19, ընդունվեց որոշում:

2. **ԼՍԵՑԻՆ** - Վանաձոր համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ 109-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին :

Զեկուցեց համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսական բաժնի պետ Վահե Գրիգորյանը

Զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ: Հարցը վերաբերում էր երթևեկության փոփոխության համար նոր ճանապարհային նշանների տեղադրմանը՝ 5 622 222 դրամ:
Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 19, ընդունվեց որոշում:

3. **ԼՍԵՑԻՆ** - Վանաձոր համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ 109-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին /3.800.000/:

- Զեկուցեց համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսական բաժնի պետ Վահե Գրիգորյանը

Զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ: Հարցը վերաբերում էր փողոցների գծանշման և երթևեկության գլխավոր հատակագծի կից փաթեթի ձեռքբերման և նախագծահետազոտական աշխատանքների իրականացմանը՝ 3 800 հազար դրամ:
Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 19, ընդունվեց որոշում:

4. **ԼՍԵՑԻՆ** - Վանաձոր համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ 109-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին

- Զեկուցեց համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսական բաժնի պետ Վահե Գրիգորյանը

Զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ: Հարցը վերաբերում էր համայնքի կարիքների համար տեսանկարահանող սարքերի ձեռքբերմանը և տեղադրմանը՝ 3 500 հազար դրամ:
Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 16, դեմ՝ 3 /Ա.Փելեշյան, Է.Մովսիսյան, Տ.Նազարյան/, ընդունվեց որոշում:

5. ԼՍԵՑԻՆ - Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնքի սեփականություն համարվող արխիվային փաստաթղթերի սեփականության իրավունքը պետական սեփականության փոխանցելու մասին:

- Զեկուցեց համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Արթուր Օհանյանը:

Զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:
Ավագանու անդամ Է.Մովսիսյանը դուրս էր եկել նիստերի դահլիճից:
Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 17, ձեռնպահ՝ 1 /Գ.Քալանթարյան/, ընդունվեց որոշում:

6. ԼՍԵՑԻՆ - Վանաձոր համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերը մրցույթով կառուցապատման իրավունքով տրամադրելու և հողամասերի վարձավճարների մեկնարկային գներ սահմանելու մասին:

- Զեկուցեց համայնքապետարանի աշխատակազմի Ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի պետ Սուրեն Աբովյանը:

Զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:
Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 14, դեմ՝ 4 /Ա.Մատինյան, Հ.Ղամբարյան, Դ.Հակոբյան, Մ.Ապերյան/, ձեռնպահ՝ 1 /Գ.Քալանթարյան/, ընդունվեց որոշում:

7. ԼՍԵՑԻՆ - Վանաձոր համայնքի վարչական տարածքում գտնվող համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերի աճուրդային վաճառքի նվազագույն մեկնարկային գներին համաձայնություն տալու մասին:

- Զեկուցեց համայնքապետարանի աշխատակազմի Ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի պետ Սուրեն Աբովյանը:

Զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:
Հարցի քննարկման ընթացքում ավագանու անդամ Մ.Ապերյանը դուրս եկավ նիստերի դահլիճից և այլևս չվերադարձավ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 16, դեմ՝ 2 /Հ.Ղամբարյան, Դ.Հակոբյան/, ընդունվեց որոշում:

8. ԼՍԵՑԻՆ - «Վանաձոր համայնքի թիվ 32 մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը շինություն և հողամաս անհատույց օգտագործման իրավունքով տրամադրելու մասին:

- Զեկուցեց համայնքապետարանի աշխատակազմի Ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի պետ Սուրեն Աբովյանը:
Զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:
Հարցի քննարկման և քվեարկության ընթացքում ավագանու անդամներ Մ.Ապերյանը և Տ.Նազարյանը բացակայում էին:
Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 17, ընդունվեց որոշում:

9. ԼՍԵՑԻՆ «Վանաձոր համայնքի թիվ 33 մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը շինություն և հողամաս անհատույց օգտագործման իրավունքով տրամադրելու մասին:

- Զեկուցեց համայնքապետարանի աշխատակազմի Ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի պետ Սուրեն Աբովյանը:
Զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:
Հարցի քննարկման և քվեարկության ընթացքում ավագանու անդամներ Մ.Ապերյանը և Ա.Փելեշյանը, բացակայում էին:
Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 17, ընդունվեց որոշում:

10. ԼՍԵՑԻՆ -Վանաձոր համայնքի Լուսավորչի փողոցի թիվ 49-41/1 հասցեում գտնվող տաղավարը և դրանով զբաղեցված հողամասը ուղղակի վաճառքի ձևով Համլետ Վահանի Մալումյանին օտարելու

- Զեկուցեց համայնքապետարանի աշխատակազմի Ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի պետ Սուրեն Աբովյանը:
Զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:
Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 16, դեմ՝ 2 /Հ.Ղամբարյան, Դ.Հակոբյան/, ընդունվեց որոշում:

11. ԼՍԵՑԻՆ - Զորավար Անդրանիկի հիշատակը հավերժացնող հուշարձանի տեղադրմանը համաձայնություն տալու մասին:

- Զեկուցեց համայնքապետարանի աշխատակազմի Ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի պետ Սուրեն Աբովյանը:
Զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ: Նախագծով առաջարկվում էր Զորավար Անդրանիկի արձանի տեղադրման վայր ընտրել արհեստական լճի կանաչ գոտու եզրային մասը (Հովսեփանց կամրջից հյուսիս-արևելք):

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 18, ընդունվեց որոշում:

12. ԼՍԵՑԻՆ - Սուրեն Սարգսի Բասենցյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրմանը համաձայնություն տալու մասին:

- Զեկուցեց համայնքապետարանի աշխատակազմի Ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի պետ Սուրեն Աբովյանը:
Զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:
Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 17, ձեռնպահ՝ 1 /Գ.Քալանթարյան/, ընդունվեց որոշում:

13. ԼՍԵՑԻՆ - Վանաձոր համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 11-ի «Վանաձոր համայնքի համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների հաստիքացուցակները, պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» թիվ 105-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին /Թիվ 5 մանկապարտեզ/

- Զեկուցեց համայնքապետարանի Մշակույթի, կրթության և երիտասարդության հարցերի բաժնի պետ Գոռ Բաղյանը:
Զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ: Քննարկումների արդյունքում առաջարկվեց փոփոխություն կատարել որոշման նախագծին կից հավելվածում և «Հատուկ մանկավարժ» - ի հաստիքը սահմանել 1 դրույք և այդ փոփոխությամբ նախագիծը դնել քվեարկության:
Նախապես քվեարկության դրվեց 1-ին տարբերակը:
Քվեարկությամբ, դեմ՝ 17, ձեռնպահ՝ 1 /Ա.Ափինյան/, որոշում չընդունվեց:

Այնուհետև նիստը վարողն առաջարկեց քվեարկել փոփոխություններով նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 18, ընդունվեց որոշում:

14. ԼՍԵՑԻՆ - Վանաձոր համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 11-ի «Վանաձոր համայնքի համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների հաստիքացուցակները, պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» թիվ 105-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին /Գուսան Զաքարյանի անվան մշակույթի տուն/

- Զեկուցեց համայնքապետարանի Մշակույթի, կրթության և երիտասարդության հարցերի բաժնի պետ Գոռ Բաղյանը:
Զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:
Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 18, ընդունվեց որոշում:

15. ԼՍԵՑԻՆ - «Վանաձորի համայնքի թիվ 1 մշակույթի տուն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը անվանափոխելու մասին:

- Զեկուցեց համայնքապետարանի Մշակույթի, կրթության և երիտասարդության հարցերի բաժնի պետ Գոռ Բաղյանը:

Զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Հարցի քննարկման և քվեարկության ընթացքում ավագանու անդամներ Մ.Ապերյանը և Դ.Սիմոնյանը բացակայում էին:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 17, ընդունվեց որոշում:

16. ԼՍԵՑԻՆ - Գրադարանային գույք և գրքային ֆոնդ նվիրաբերելու մասին

- Զեկուցեց համայնքապետարանի Եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնի պետ Վահագն Դավիթավյանը:

Զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 18, ընդունվեց որոշում:

17. ԼՍԵՑԻՆ - «Լոռու մարզի ձյուդոյի ֆեդերացիա» հասարակական կազմակերպությանը անհատույց օգտագործման իրավունքով տարածք տրամադրելու մասին:

- Զեկուցեց համայնքապետարանի Եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնի պետ Վահագն Դավիթավյանը:

Զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 18, ընդունվեց որոշում:

18. ԼՍԵՑԻՆ - Տիգրան Վասակի Կիրակոսյանին վարձակալությամբ բնակարան հանձնելու մասին

- Զեկուցեց Կոմունալ տնտեսության, բարեկարգման և շրջակա միջավայրի պահպանության բաժին պետ Կարեն Պառավյանը:

Զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 18, ընդունվեց որոշում:

19. ԼՍԵՑԻՆ - Նիստը վարողն առաջարկեց քվեարկությամբ որոշել Վանաձոր համայնքի ավագանու հերթական նիստի օրը և առաջարկեց հաջորդ նիստի օր նշանակել 2018 թվականի հոկտեմբերի 26-ը: Առաջարկը դրվեց քվեարկության:

Քվեարկությամբ, կողմ՝ 18, ընդունվեց որոշում:

Նիստի սկիզբ սահմանվեց ժամը 10:00-ն:

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵՑ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ

ԱՐԹՈՒՐ ՕՀԱՆՅԱՆԸ